

## B. Candy

Problem Name	Candy
Time Limit	3 seconds
Memory Limit	1 gigabyte

Իցա հինավուրց քաղաքում մի պալատ կա, որտեղ երևակայությունից դուրս քանակությամբ հարստություն կա: Պալատի ներսում կա մի միջանցք, որտեղ շարված են  $N$  հատ արկղեր, որոնց մեջ ամբողջ աշխարհից բերված կոնֆետներ կան:

Կոնֆետի արկղերը համարակալված են 0-ից  $N - 1$  թվերով ձախից աջ:  $i$ -րդ արկղում կա  $a_i$  հատ կոնֆետ, որտեղ  $a_i$ -ն ոչ բացասական ամբողջ թիվ է:

Դուք ցանկանում եք արկղերը այնպես տեղափոխել, որ միջանցքի ձախ մասում լինեն շատ կոնֆետներ:

Ձեզ տրված է  $a_0, a_1, \dots, a_{N-1}$  զանգվածը, ինչպես նաև երկու ամբողջ թվեր՝  $F$  և  $T$ : Մեկ գործողությունով դուք կարող եք տեղերով փոխել երկու **հարևան** տարրեր  $a_0, a_1, \dots, a_{N-1}$  զանգվածից: Գտեք մինիմալ գործողությունների քանակը, որ անհրաժեշտ է, որպեսզի  $a$  զանգվածի առաջին  $F$  տարրերի գումարը լինի առնվեզն  $T$ :

### Մուտքային տվյալներ

Մուտքային տվյալների առաջին տողը պարունակում է երեք ամբողջ թվեր՝  $N$ ,  $F$  և  $T$ :

Մուտքային տվյալների երկրորդ տողը պարունակում է  $N$  ամբողջ թվեր՝  $a_0, a_1, \dots, a_{N-1}$ :

### Ելքային տվյալներ

Եթե լուծում գոյություն չունի արտաձեք մի տող՝ “NO”:

Հակառակ դեպքում, արտաձեք մեկ ամբողջ թիվ՝ գործողությունների մինիմալ անհրաժեշտ քանակը:

### Սահմանափակումներ և միավորներ

- $1 \leq N \leq 100$ .

- $1 \leq F \leq N$ .
- $0 \leq T \leq 10^{11}$ .
- $0 \leq a_i \leq 10^9$  որտեղ  $i = 0, 1, \dots, N - 1$ .

**զգուշացում** մուտքային տվյալների թվերը կարող են չտեղավորվել 32-bit ամբողջ թվերում, զգուշացեք գերհագեցումից C++ լեզվում:

Այս խնդիրը գնահատվում է ենթախնդիրների միջոցով:

Խումբ	Միավոր	Սահմանափակումներ
1	6	$N \leq 2$ և $a_i \leq 100$ որտեղ $i = 0, 1, \dots, N - 1$ և $T \leq 10^9$
2	19	$a_i \leq 1$ որտեղ $i = 0, 1, \dots, N - 1$
3	16	$N \leq 20$
4	30	$a_i \leq 100$ և $i = 0, 1, \dots, N - 1$
5	29	Լրացուցիչ սահմանափակումներ չկան

## Օրինակ

Առաջին օրինակում զանգվածի առաջին երկու տարրերի գումարը պետք է լինի 27-ից մեծ կամ հավասար: Դրան կարելի է հասնել մեկ զույգ հարևանների տեղափոխումով՝ տեղերով փոխենք 4-ը և 20-ը: Այդ գործողությունից հետո, զանգվածը կլինի՝ 10 20 4 6 3 3, և առաջին երկու տարրերի գումարը կլինի  $10 + 20 = 30 \geq 27$ .

Երկրորդ օրինակում 0-ն պետք է տանել, հասցնել զանգվածի վերջը, դրա համար պահանջվում է 3 գործողություն:

Երրորդ օրինակում անհնար է առաջին երկու տարրերի գումարը դարձնել 100-ից մեծ հավասար: (ամենամեծ հնարավոր գումարը՝  $60 + 30 = 90$ ):

Input	Output
<pre>6 2 27 10 4 20 6 3 3</pre>	1
<pre>6 5 5000000000 1000000000 1000000000 0 1000000000 1000000000 1000000000</pre>	3
<pre>3 2 100 20 30 60</pre>	NO
<pre>1 1 100 100</pre>	0